ԼԻՆԵԼ ԵՐՋԱՆԻԿ
ԱՆԿԱԽ ՊԱՐԱԳԱՆԵՐԻՑ

Երջանկության սովորությունները (Փիլիպպեցիս)
Մաս 2 Փիլիպպեցիս 1:12-30

«Միայն թե Քրիստոսի Ավետարանին վայել կերպո՛վ ապրեցեք.» Փիլիպպեցիս 1:27

Ի՞նչ էլ որ պատահի, ես կարող եմ երջանիկ լինել, եթե...

1. Բոլոր դժվարություններին նայեմ Աստծո տեսանկյունից

«Կամենում եմ, եղբայրնե՛ր, որ իմանաք, թե ինչ որ ինձ հետ եղավ, ավելի Ավետարանի առաջադիմության համար հաջողվեց:» Փիլիպպեցիս 1:12

Ամեն անգամ երբ դիմակայում եմ դժվարությունս հավատքով...

* Այդ վկայություն է անհավատների համար

«Քրիստոսով իմ կապանքները հայտնի դարձան ամբողջ պալատին և մյուս բոլորին էլ:» Փիլիպպեցիս 1:13

* Այդ քաջալերանք է հավատացյալների համար

«Եվ Տիրոջով եղբայրներից շատերը, իմ կապանքներով քաջալերված, ավելի համարձակ եղան, Աստծու խոսքն առանց վախի խոսելու:» Փիլիպպեցիս 1:14

2. Երբեք թույլ չտամ, որ ուրիշները կառավարեն իմ արարքները

Քննադատ, ընկեր, մրցակից, դավադիր

«Ոմանք նախանձի ու հակառակության պատճառով, ոմանք էլ հոժարությամբ քարոզում են Քրոստոսին: Իսկ ոմանք հակառակությունից են Քրիստոսին քարոզում, և ոչ թե անկեղծ՝ կարծելով, թե իմ կապանքների վրա նեղություն կավելացնեն: Ոմանք էլ սիրուց՝ իմանալով, որ Ավետարանի ջատագովության համար կանգնած եմ:» Փիլիպպեցիս 1:15-17

Պողոսի վերաբերմունքը

«Բայց ի՞նչ. ինչպես էլ որ լինի, պատրվակով թե ճշմարտապես, Քրիստոսն է քարոզվում, ու սրա համար <u>ուրախ եմ և ուրախ էլ կլինեմ:</u>» Փիլիպպեցիս 1:18

«Եվ <u>հակառակորդներին ոչ մի բանով մի՛ զարհուրեք</u>, որովհետև դա նրանց համար կորստյան նշան է, իսկ ձեզ համար՝ փրկության:» Փիլիպպեցիս 1:28

«Եվ ձեզ Աստծուց դա շնորհ եղավ Քրիստոսի համար՝ ոչ միայն հավատալ նրան, այլ <u>նրա համար չարչարվել</u> էլ: Նույն պատերազմն ունենալով, որ իմ մեջ տեսաք ու հիմա ինձանից լսում եք:» Փիլիպպեցիս 1:29-30

3. Միշտ վստահեմ, որ Աստված ամեն ինչ կկարգավորի

«Որովհետև <u>գիտեմ</u>, որ այս բանը, ձեր աղոթքով ու Հիսուս Քրիստոսի Հոգու օժանդակությամբ, <u>վերջապես փրկության պատճառ կլինի</u> ինձ համար:» Փիլիպպեցիս 1:19

«Իմ <u>ակնկալության և հույսի համեմատ</u>՝ ոչ մի բանով ամոթով չեմ մնա, այլ <u>ամենայն համարձակությամբ</u>, ինչպես ամեն ժամանակ, հիմա էլ Քրիստոսն իմ մարմնի մեջ կփառավորվի՝ կյանքով թե մահով.» Փիլիպպեցիս 1:20

4. Մնամ կենտրոնացած նպատակիս, ոչ թե դժվարությունիս վրա

«Բայց եթե մարմնի մեջ կյանքն իմ գործին պտուղ է բերում, էլ չգիտեմ, թե ո՛րն ընտրեմ: Երկու կողմից էլ նեղ տեղն եմ՝ փափագելով դուրս գալ ու Քրիստոսի հետ լինել, որ շատ ավելի լավ է. Բայց մարմնի մեջ մնալս ձեզ ավելի է հարկավոր: Եվ այս բանը հաստատ գիտեմ որ կապրեմ ու կմնամ ձեր բոլորի հետ, որ դուք զարգանաք և ուրախ լինեք հավատառով:» Փիլիպպեցիս 1:22-25

«Ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը շահ:» Փիլիպ. 1:21

Թե ինչպես կլրացնես հաջորդ տողը, կորոշի քո երջանկությունը.

Ինձ համար ապրելը _____ է:

Հաջորդ Քարոզի Թեման:
«ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԽՈՆԱՐՀ ՃԱՆԱՊԱՐՀԸ»
Հովիվ Սարօ Խաչիկեան